



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Երևան, 0025, Արմվյան 52^ա • Республика Армения, Ереван, 0025, Абовяна 52^а •
52^a Abovyan, 0025, Yerevan, Republic of Armenia(+374 10) 54-43-91/94,95,96/1 ՀՀ -37,
armphilology@ysu.am, www.yasu.am

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 4
ԵՊՀ ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԵՈՐՀՐԴԻ՝
2023 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19 - ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. 2023–2024 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքը ֆակուլտետում (զեկուցող՝ Ա. Սարգսյան):
2. Հեռակա ուսուցման մագիստրատուրայի ավարտական աշխատանքների պաշտպանության ամփոփիչ ատեստավորման օրվա և հանձնաժողովի կազմերի ներկայացում:
3. Ռեկտորատից ստացված գրությունների ծանուցում և քննարկում:
4. Ընթացիկ հարցեր:

Մկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան դոց. Ա. Գալստյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում է 28-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ:

Օրակարգի 1-ի հարցի առթիվ հայ բանասիրության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար դոց. Ա. Սարգսյանը տեղեկացրեց, որ հեռակա ուսուցման ընթացիկ քննությունները արդեն մեկնարկել են, առկա ուսուցման բաժնում կսկսվեն 2 օրից, իսկ ամփոփիչ քննաշրջանը սկսվելու է հունվարի 10 – ից: Ա. Սարգսյանը նաև տեղեկացրեց, որ բոլոր կուրսերի հետ նախապես քննարկվել և համաձայնեցվել է քննությունների գրաֆիկը: Ամբիոններն էլ իրենց հերթին դասախոսներին ուղարկել են ամփոփիչ և կիսամյակային քննությունների գրաֆիկները:

Ա. Սարգսյանը ևս մեկ անգամ հիշեցրեց, որ անհրաժեշտ է էլեկտրոնային հարթակում ժամանակին և ուշադիր լրացնել քննական տեղեկագրերը:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ ֆակուլտետի ղեկան դոց. Ա. Գալստյանը տեղեկացրեց, որ հայ բանասիրության ֆակուլտետի՝ հեռակա մագիստրատուրայի ավարտական թեզերի պաշտպանությունը կկազմակերպվի հունվարին՝ ըստ օրինակելի ժամանակացույցի: Ավարտական թեզ պաշտպանելու են 4 մագիստրոսներ՝ 2-ը հայոց լեզու մասնագիտությամբ, 2-ը՝ հայ գրկանությունան: Ուսանողների փոքր թվով պայմանավորված՝ նպատակահարմար է ձևավորել 4 հոգանոց հանձնաժողով, որում 2 անդամ կլինեն դրսից հրավիրված, իսկ երկուսը՝ ֆակուլտետից՝ ղեկան Ա. Գալստյանը և հայոց լեզվի ամբիոնի վարիչ Յու. Ավետիսյանը: Դրսից հրավիրված անդամներից մեկը՝ Բ. Գ. Թ., դոց Սաթենիկ Ավետիսյանը (ՀՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի փոխտնօրեն) հրավիրվում է որպես հանձնաժողովի նախագահ, իսկ որպես հանձնաժողովի անդամ՝ հրավիրվում է ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, Բ. Գ. Թ., դոց. Լեոնիդ Թեյլանը:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ նշվեց, որ ֆակուլտետի գրասենյակը ռեկտորատից ստացած գրությունները ժամանակին և ըստ կարգի ուղարկում է ամբիոնների վարիչներին և դրանց մասին ծանուցում է դասախոսներին: Բոլոր գրությունները քննարկվում են գրասենյակում և ամբիոններում, անհրաժեշտ պատասխանը ուղարկվում է՝ կարգին և ժամանակացույցին համապատասխան:

Ընթացիկ հարցերում՝

ԼՄԵՑԻՆ - ԵՊՀ պրոֆ., Բ. Գ. Դ. Տիգրան Սիմյանի ղեկավարությամբ «Մասնա ծոեր» էպոսը արվեստում և հասարակական-քաղաքական խոսույթում. հանրային հիշողություն, ինքնություն, տիպաբանություն և մուլտիմոդալություն» թեման ՀՀ ԿԳՄՍ նախարարության հայտարարած «Հասարակական գիտությունների, հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառներում հետազոտություններ - 2024» դրամաշնորհային մրցույթին մասնակցելու երաշխավորության հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Գալստյանը, Յու. Ավետիսյանը, Ալ. Մակարյանը, դոց. դոց. Թ. Տոնյանը, Ռ. Էլոյանը, Ա. Ջրբաշյանը և ուրիշներ:

Նշվեց, որ առաջարկվող թեման միջգիտակարգային է և բազմաընդգրկուն: Դրամաշնորհին ներկայացվող պահանջներով պայմանավորված՝ թեմայի կատարման աշխատանքներին մասնակցելու է նաև Տալլինի համալսարանի պրոֆեսոր, որի հետ համագործակցությունը լինելու է հայ-էստոնական էպիկական ժառանգության քննության համատեքստում:

Թեմայի վերնագիրը ենթադրում է, որ կատարող թիմը անդրադառնալու է ոչ միայն էպոսի գրական մշակումներին, այլ նաև արվեստի մյուս տեսակներում տեղ գտած «մեկնաբանություններին» (կինո, քանդակ, գեղանկար և այլն), ինչպես նաև քաղաքական խոսույթում երևան եկող կերպարների հիշատակումներին և դրանց գործառույթներին:

Նշվեց նաև, որ մուլտիմոդալություն եզրույթով մատնանշվում են էպոսի զանազան դրսևորումները արվեստի տարբեր տեսակներում:

Հիշյալ գիտական թեման բազմակողմանի ուսումնասիրության նյութ է և մեծ ներդրում կլինի էպոսագիտության ոլորտում:

ՈՐՈՇԵՑԻՆ – «Սասնա ծռեր» էպոսը արվեստում և հասարակական-քաղաքական խոսույթում. հանրային հիշողություն, ինքնություն, տիպաբանություն և մուլտիմեդիայություն» թեման (ղեկավար՝ ԵՊՀ պրոֆ., ք. գ. դ. Տիգրան Միսյան ղեկավարությամբ) երաշխավորել մասնակցելու ՀՀ ԿԳՄՍ նախարարության հայտարարած «Հասարակական գիտությունների, հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառներում հետազոտություններ - 2024» մրցույթին:

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Լ. ՄԵԼՔՈՆՅԱՆ